ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

«ԳՆՈՒՄՆԵՐԻ ԱՋԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ»
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«21» փետրվարի 2017թ.

Հաստատում եմ՝

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի պետ

_____ Մ. Անանյան

ԳԲԽ-17/17 բողոքը քննող

հանձնաժողովին

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, ՀՀ կառավարության 31.10.2002թ. N 1904-Ն որոշմամբ հաստատված «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կանոնադրության 12-րդ կետի 8-րդ ենթակետով, ինչպես նաև ուսումնասիրելով «Մաքսիուր» ՍՊԸ-ի 09.02.2017թ. «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին ներկայացրած բողոքը՝ պարզել ենք հետևյալը.

1. «Մաքսիուր» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը

«Մաքսիուր» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) 09.02.2017թ. ներկայացրած բողոքով հայտնել է, որ Ընկերությունը 01.02.2017թ. ժամը 11:00-ին մասնակցել է Արմավիրի համայնքապետարանի կողմից հայտարարված վառելիքի ձեռքբերման նպատակով հայտարարված «ԱՄ-ԱՔ-ՇՀԱՊՁԲ-01-17» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին և ճանաչվել է 1-ին տեղ զբաղեցրած մասնակից: 2017թ. փետրվարի 2-ին ժամը 16:45-ին Արմավիրի համայնքապետարանի կողմից ստացվել է էլեկտրոնային ծանուցում, որ Ընկերությունը ճանաչվել է 1-ին տեղ զբաղեցրած մասնակից և

առաջարկվել է մինչև 2017թ. փետրվարի 6-ը ժամը 14:30-ին ներկայացնել հրավերով նախատեսված հրավերի 2-րդ մասի 3-րդ բաժնով պահանջվող փաստաթղթերը, առաջարկվող ապրանքի անվանումը և տեխնիկական բնութագրերը:

2017թ. փետրվարի 03-ին ժամը 10:45-ին մրցույթի ոչ ավտոմատ ծանուցման եղանակով՝ էլեկտրոնային փոստով info@armeps.am և armavir.armavir@mta.gov.am էլեկտրոնային փոստի հասցեներին ուղարկվել է Արմավիրի համայնքապետարանի կողմից պահանջվող բոլոր փաստաթղթերը, ապրանքի անվանումը և տեխնիկական բնութագրերը: Ուղարկված փաստաթղթերի ստանալու մասին հավաստումը հաստատում է պատվիրատուի կողմից 2017թ. փետրվարի 3-ին 10:45-ին ստանալու մասին էլեկտրոնային հետադարձ փոստի ծանուցումը:

«Մաքսիուր» ՍՊԸ-ն գտնում է, որ Արմավիրի համայքապետարանը խախտել է ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-Ն որոշման 48-րդ և 49-րդ կետերը, շահագրգռվածությունից ելնելով հաղթող է ճանաչել 2-րդ տեղը զբաղեցրած «ՍիՓիէս Օյլ Քորփորեյշն» ՍՊԸ-ին:

«Մաքսիուր» ՍՊԸ-ն ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին խնդրել է կասեցնել Արմավիրի համայնքապետարանի 2-րդ տեղ զբաղեցրած մասնակցի հետ պայմանագիր կնքելու գործընթացը և չեղյալ համարել «Մաքսիուր» ՍՊԸ-ին մերժելու և «ՍիՓիէս Օյլ Քորփորեյշն» ՍՊԸ-ին հաղթող ճանաչելու մասին որոշումները:

<u>2. Արմավիրի համայնքապետարանի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը</u>

Արմավիրի համայնքապետարանը (այսուհետ նաև՝ Պատվիրատու), ի պատասխան Կենտրոնի 10.02.2017թ. թիվ 01/04.2/417-17 գրության, 15.02.2017թ. թիվ 214 գրությամբ Կենտրոնին հայտնել է, որ Արմավիրի համայնքապետարանի կարիքների համար անհրաժեշտ վառելիքի ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ԱՄ-ԱՔ-ՇՀԱՊՁԲ-01-17» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնման ընթացակարգ:

Վերը նշված ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 01.02.2017թ. թիվ 3.2 որոշմամբ ընկերությունը ճանաչվել է ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակից:

02.02.2017թ. «Մաքսիուր» ՍՊԸ-ն էլեկտրոնային եղանակով ծանուցվել է հրավերի 2-րդ մասի 3-րդ բաժնով պահանջվող փաստաթղթերը Արմավիրի համայնքապետարանի

armavir.armavir@mta.gov.am էլեկտրոնային փոստի հասցեով ներկայացնելու մասին, իսկ դրանց ներկայացման վերջնաժամկետ է սահմանվել մինչև 06.02.2017թ. ժամը 14:30-ը:

Սակայն մինչև սահմանված ժամկետի ավարտը Ընկերության կողմից Արմավիրի համայնքապետարանի armavir.armavir@mta.gov.am էլեկտրոնային փոստի հասցեին որևէ էլեկտրոնային ծանուցում չի ստացվել, ինչը և հիմք է հանդիսացել ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2017թ. փետրվարի 6-ին ժամը 14:30-ին հնավիրված նիստի 1.2 որոշմամբ «Մաքսիուր» ՍՊԸ-ի հայտը մերժելուն:

Արմավիրի համայնքապետարանը հաշվի առնելով վերագրյալը՝ նշել է, որ «ԱՄ-ԱՔ-ՇՀԱՊՁԲ-01-17» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշումներ կայացնելիս ղեկավարվել է բացառապես ՀՀ գնումների մասին գործող օրենսդրությամբ և գնման ընթացակարգի հրավերի պահանջներին համաձայն խնդրել է «Մաքսիուր» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշումը թողնել անփոփոխ:

3. ԳԲԽ-17/17 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲԽ-17/17 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. Արմավիրի համայնքապետարանի կարիքների համար անհրաժեշտ վառելիքի ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ԱՄ-ԱՔ-ՇՀԱՊՁԲ-01-17» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով 01.02.2017թ. հայտ է ներկայացրել նաև «Մաքսիուր» ՍՊԸ-ն:

2. «ԱՄ-ԱՔ-ՇՀԱՊՁԲ-01-17» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովը (այսուհետև նաև՝ Հանձնաժողով) ***01.02.2017թ.*** ժամը 11:00-ի նիստի թիվ 2 արձանագրության 3.2 կետի համաձայն՝ «Մաքսիուր» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից:

3. Նույն արձանագրության 4.1 կետի համաձայն՝ որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի և ՀՀ ֆինանսների նախարարության հարցման պատասխանների ամփոփման նիստը որոշվել է անցկացնել 2017թ. փետրվարի 6-ին ժամը 14:30-ին:

4. Պատվիրատուն 02.02.2017թ. ժամը 16:45-ին ոչ ավտոմատ ծանուցման միջոցով ծանուցել է Ընկերությանը և հայտնել է, որ «ԱՄ-ԱՔ-ՇՀԱՊՁԲ-01-17» ծածկագրով ընթացակարգի արդյունքում «Մաքսիուր» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից: Ընթացակարգի հրավերի համաձայն անհրաժեշտ է մինչև 2017թ. փետրվարի 6-ը ժամը 14:30-ը ներկայացնել հրավերով նախատեսված՝ հրավերի 2-րդ մասի 3-րդ բաժնով պահանջվող փաստաթղթերը, առաջարկվող ապրանքի անվանումը և տեխնիկական բնութագրերը:

5. Հանձնաժողովի ***06.02.2017թ.*** ժամը 14:30-ի նիստի թիվ 3 արձանագրության 1.2 կետի համաձայն՝ հանձնաժողովը արձանագրել է, որ առաջին տեղ զբաղեցրած մասնակից «Մաքսիուր» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում Պատվիրատուին չի ներկայացրել որակավորման չափանիշները հավաստող փաստաթղթերը, ինչով պայմանավորված Հանձնաժողովը որոշել է մերժել Ընկերության հայտը:

6. Նույն արձանագրության 1.3 կետի համաձայն՝ հանձնաժողովը որոշել է Ընթացակարգի երկրորդ տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել «ՍիՓիԷս Օյլ Քորփորեյշն» ՍՊԸ-ին:

7. «Մաքսիուր» ՍՊԸ-ի 09.02.2017թ. բողոքին կից Կենտրոնին ներկայացրել է Ընկերության էլեկտրոնային փոստի արտատպումը, որի համաձայն՝ «Մաքսիուր» ՍՊԸ-ի էլեկտրոնային փոստի հասցեից ***(maxhur.tender@mail.ru)*** Պատվիրատուի էլեկտրոնային փոստի հասցեին ***(armavir.armavir@mta.gov.am)*** 03.02.2017թ. ուղարկվել է Պատվիրատուի կողմից պահանջված՝ Ընթացակարգի հրավերով նախատեսված որակավորման չափանիշները հավաստող փաստաթղթերը «pdf» տիպի ֆայլով:

8. Կենտրոնում 15.02.2017թ. ժամը 17:15-ին կայացած նիստի ժամանակ, ԳԲԽ-17/17 բողոքը քննող հանձնաժողովը ճշտեց, որ ***armavir.armavir@mta.gov.am*** էլեկտրոնային փոստի հասցեն հանդիսանում է Արմավիրի համայնքապետարանի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեն և առաջարկեց որպեսզի կողմերը նիստի ժամանակ համակարգչի միջոցով ներկայացնեն իրենց էլեկտրոնային փոստի հասցեների միջոցով ուղարկված և ստացված հաղորդագրությունները:

15.02.2017թ. ժամը 17:15-ին կայացած ԳԲԽ-17/17 բողոքը քննող հանձնաժողովի նիստի ժամանակ էլեկտրոնային փոստերի հասցեների ուսումնասիրության արդյունքում, պարզվեց, որ ***maxhur.tender@mail.ru*** էլեկտրոնային փոստի հասցեից 03.02.2017թ. ժամը

10:45-ին ***info@armeps.am*** ***և*** ***armavir.armavir@mta.gov.am*** էլեկտրոնային փոստի հասցեներին ուղարկվել է ընթացակարգի հրավերով սահմանված որակավորումը հիմնավորող փաստաթղթերը «pdf» տիպի ֆայլով, իսկ Արմավիրի համայնքապետարանի ***armavir.armavir@mta.gov.am*** էլեկտրոնային փոստի հասցեի նամակների մուտքային բաժնում առկա է ***maxhur.tender@mail.ru*** էլեկտրոնային փոստի հասցեից ***03.02.2017թ. ուղարկված հաղորդագրություն:***

4. ԳԲԽ-17/17 բողոքը քննող հանձնաժողովին «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացվող հիմնավորումները և եզրահանգումը.

«Գնումների աջակցման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը, ուսումնասիրելով «Մաքսիուր» ՍՊԸ-ի 09.02.2017թ. ներկայացրած բողոքը և բողոքին կից ներկայցված փաստաթղթերը, Արմավիրի համայնքապետարանի 15.02.2017թ. թիվ 214 գրությունը, «ԱՄ-ԱՔ-ՇՀԱՊՁԲ-01-17» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 01.02.2017թ. թիվ 2 և 06.02.2017թ. թիվ 3 արձանագրությունները, հայտնում է հետևյալը.

ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի (այսուհետ՝ Կարգ) 47-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, իսկ ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 35-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը: Սույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթերը չներկայացվելու դեպքում հանձնաժողովը մերժում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդող տեղը զբաղեցրած մասնակցին

Կարգի 49-րդ կետի համաձայն՝ նույն կարգի 47-րդ կետի 2-րդ ենթակետով նախատեսված ժամկետի ավարտին հաջորդող աշխատանքային օրը քարտուղարն էլեկտրոնային եղանակով հանձնաժողովի անդամներին միաժամանակ տրամադրում է

առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերի պատճենները, գնահատման թերթիկների երկուական օրինակ և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեից ստացված եզրակացությունը: Սույն կետում նշված փաստաթղթերի գնահատման արդյունքների հաստատման նիստը հրավիրվում է ոչ ուշ, քան փաստաթղթերը հանձնաժողովի անդամներին տրամադրվելուն հաջորդող երրորդ աշխատանքային օրը: Ընդ որում, ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված տեխնիկական բնութագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին, իսկ անհամապատասխանություն արձանագրելու դեպքում հանձնաժողովի նիստի արձանագրության մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

«Մաքսհուր» ՍՊԸ-ի 09.02.2017թ. բողոքին կից Կենտրոնին ներկայացրած Ընկերության էլեկտրոնային փոստի արտատպումներից երևում է, որ «Մաքսհուր» ՍՊԸ-ի էլեկտրոնային փոստի հասցեից ***(maxhur.tender@mail.ru)*** Պատվիրատուի էլեկտրոնային փոստի հասցեին ***(armavir.armavir@mta.gov.am)*** 03.02.2017թ. ուղարկվել է Պատվիրատուի կողմից պահանջված՝ Ընթացակարգի հրավերով նախատեսված որակավորման չափանիշները հավաստող փաստաթղթերը «pdf» տիպի ֆայլով:

Կենտրոնում 15.02.2017թ. ժամը 17:15-ին կայացած նիստի ժամանակ, ԳԲԽ-17/17 բողոքը քննող հանձնաժողովը ճշտեց, որ ***armavir.armavir@mta.gov.am*** էլեկտրոնային փոստի հասցեն հանդիսանում է Արմավիրի համայնքապետարանի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեն և առաջարկեց որպեսզի կողմերը նիստի ժամանակ համակարգչի միջոցով ներկայացնեն իրենց էլեկտրոնային փոստի հասցեների միջոցով ուղարկված և ստացված հաղորդագրությունները:

15.02.2017թ. ժամը 17:15-ին կայացած ԳԲԽ-17/17 բողոքը քննող հանձնաժողովի նիստի ժամանակ էլեկտրոնային փոստերի հասցեների ուսումնասիրության արդյունքում պարզվեց, որ ***maxhur.tender@mail.ru*** էլեկտրոնային փոստի հասցեից 03.02.2017թ. ժամը 10:45-ին ***info@armeps.am և armavir.armavir@mta.gov.am*** էլեկտրոնային փոստի հասցեներին ուղարկվել է ընթացակարգի հրավերով սահմանված որակավորումը հիմնավորող փաստաթղթերը «pdf» տիպի ֆայլով, իսկ Արմավիրի համայնքապետարանի ***armavir.armavir@mta.gov.am*** էլեկտրոնային փոստի հասցեի նամակների մուտքային

բաժնում առկա է ***maxhur.tender@mail.ru*** էլեկտրոնային փոստի հասցեից 03.02.2017թ. ուղարկված հաղորդագրություն:

Այսպիսով գտնում ենք, որ «Մաքսիուր» ՍՊԸ-ի կողմից պահպանվել է Կարգի 47-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված պահանջները, այն է՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում՝ ***(03.01.2017թ.)*** ներկայացրել է որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը՝ Պատվիրատուի կողմից նման պահանջը ստանալուց (***02.02.2017թ.***) հետո, իսկ Պատվիրատուն մերժելով Ընկերության հայտը՝ որակավորումը հիմնավորող փաստաթղթեր չներկայացնելու հիմնավորմամբ, խախտել է գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջները:

Ելնելով վերոգրյալից՝ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի ԳԲԽ-17/17 բողոքը քննող հանձնաժողովին առաջարկում է «Մաքսիուր» ՍՊԸ-ի 09.02.2017թ. բողոքը բավարարել՝ դադարեցնել «ԱՄ-ԱՔ-ՇՀԱՊՁԲ-01-17» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 06.02.2017թ. ժամը 14:30-ի նիստի թիվ 3 արձանագրության 1.2 «Մաքսիուր» ՍՊԸ-ի հայտը մերժելու և նույն արձանագրության 1.3 կետով՝ «ՍիՓիէս Օյլ Քորփորեյշն» ՍՊԸ-ին հաղթող ճանաչելու մասին որոշումները:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի՝

Պետի տեղակալ՝ Հ.Այունց

Գնումների աջակցման և իրավական խորհրդատվության վարչության պետ՝ Հ. Ենգոյան

Գնումների բողոքարկման և ահազանգման բաժնի պետ՝ ԳԲԽ-104/16 բողոքը քննող հանձնաժողովի քարտուղար՝ Ռ. Մկրտչյան